

Տի. Մ. Մանգոյ Տոբոլսկու

էջ 7



ԱՐԾՈՒՒ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՅԵԼ ԷԱՅՐԵՆԱՄԻ ԹԵՒՕԲ
ՅԱՐԺՈՒՆԻ ԽԵՆԵՍԱՆԷՆ ՎԵՐԵԳԵՑ

ԽՐԵԳԻՐ ԷԱՅՐԵՆԱՄՈՍ
ԽՐԺԻՉ. ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՍՏԵՆ

1884 թ. 3.

ԷԱՏՈՐ ԶՈՐՐՈՐԴ
ՎԵՏԱՍՊ

ՈՅԻ.

ԲՅԱՐԱՆԻՆ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՐՅՈՒ
Ի ՎԵՐԱԳ

Handwritten text at the top of the page, possibly a title or header, in a cursive script.



Handwritten text in the middle section of the page, appearing to be a formal declaration or statement.

Handwritten text in the lower middle section of the page, possibly a signature or a date.

Handwritten text in the lower section of the page, possibly a signature or a date.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or a date.

Partial view of handwritten text from the adjacent page on the right.



ԵՐԾՈՒՒ

Պ.Ա.Ս.ՊՈՒՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Դ .

1861

ԹԻՒ 3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ Հայաստանի մթնցած երկիրներու մէջ
համատարած լոյս ծաւալելու համար ժողովրդական դպրոց
պէտք է : Ազգային լուսաւորութեան միջոցն այս է միայն .
Ո՛վ է այն խելացնոր եւ ապուշ միտքը, որ կ'կարծէ կամ
խորամանկութեամբ կամ յիմարութեամբ, թէ ուսմունքը
միայն եկեղեցւոյ պաշտօնէից հարկաւոր է . այս թիւր
դատաստանէն դուրս առած եղած է Հայաստանի մէջ այն

յիմարական խօսքը թէ « Տղաս Քահանայ կամ Վարդապետ
 պիտի լինի, ինչ պէտք է իրեն համար աւելի զրեւ կարդալոյ,
 Հնոյն Հայաստանի նախնի գործերուն մէջ պատմութեան
 կարգէն կիմանալ, որ ուսմունքը իբրեւ մեծազանգութիւն
 միայն մեր եկեղեցւոյ պաշտօնից բոլ կ'դռնուէր. աշխարհ-
 հական կարգէն խիստ աւելա ուսումնականներ ծներ է մեր
 սմուլ Հայաստան. որոնց մէջէն առաջին նշանաւոր իմա-
 տասէր Գրիգոր Մագիստրոս իշխանն է միայն : Գրէթէ մէկ
 դար յառաջ սւսմունքը Եւրոպայի մէջն ալ իբրեւ մեծա-
 վաճառութիւնը աւելի ճիշդութեաց խանութներու մէջ կը
 գտնուէր. բայց խոտովանել պէտք է քան թէ ուրանալ.
 ուսման լոյս կամ եռանդը սոսքին նուազ տարածելու
 կամ վառելու մասին ճիշդութները դատարարի եւ քարե-
 րար են Եւրոպացւոց սու հասարակ. աւելի իբրեւ մեծա-
 նուն եւ բարի դատարարի պիտի համարուէին աշխարհի
 առաջը, եթէ վերջի ժամանակները մեքուր դատարարս կու-
 թեան կսմին հետ խորաւանկութեան ջուրը չի խառնէին
 Փարիսեցւոց նման ուսման բանալին ու վականք միայն
 իւրեանց սեփհաւանելով : Ասկոյն ճի կը յարդգի կարծել
 թէ մեր նախնի պարզամտ ընտիր հեղեցականաց դասը
 Փարիսեցւոց դրութեան հետեւելով խորաւանկութեամբ
 ուսման բանալին կ'ընդունէին ժողովրդեան աչքէն,
 քան, սոյնպէս կարծել կամ դատել ընդ հանրայեւ աննե-
 րեկի յանցանք է թէ եւ գտնուած են ելլել մն մեր եկեղե-
 ցական դատուն կարդը այնպիսի անձինքները. զարմանք է,
 մինչդեռ օտարին գողտողոյի չընդունէր զոք իման Հայաս-
 տանի դրական մէջ կ'սողար եւ եկ թիւնաւորելը ողջամիտ
 տականքները : Եւրոպայի մէջ ապա իման անհաշիւ
 ընտիր աւելի հաւանական է կարծել թէ մեր հին ժողո-

վուրդը գիտես թէ ընդաբոյս բնաւորութեամբ ուսմունք
կատէր ու չէր սիրեր, որուն համար կողբար Խորենացին
« Անսիրելութիւն իմաստութեան » եւ այլն : Ժողովողաւ
կան դպրոցը կամ բոլորովին անդոյ կամ խիստ հազրուադիւտ
էր Հայաստանին մէջ . իսկ վանական դպրոցները բաղմաւ
պատիկ յոյժ . ինչպէս Նախընթաց Թուոյն մէջ երկարօրէն
ծանուցէնք . այս պատճառաւ բոլոր մեր Հայ մասեհագիր
ճոխ հեղինակները եկեղեցական , դասէն են . աշխարհական
կարգէն այդ յիշեալ Մագիստրոսէն իզատ, ով կարողեա
գտնել : Այժմայն մեր հին Հայաստանը, այլ եւ հանուր
Եւրոպայ . գրեթէ բոլոր աշխարհ թէ հեթանոսութեան
դարուն մէջ եւ թէ քրիստոնէութեան, ուսող մն իբրեւ
սեփհական ժառանգ եղած էր կամ քուրմերուն կամ քրիս-
տոնէական սուրբ կրօնքին առաջնորդը եկեղեցական դասուն :
Ասոր ապացոյց յայտնի կցուցանէ Ագաթանգեղոս պատ-
մագիրը . մինչդեռ սուրբ Լուսաւորիչն Գրիգոր ընդ հանութ
Հայաստանի համար սյնչափ վիճակաւոր Եպիսկոպոսները
հաւատացող քուրմերէն կ'ընտրէ եւ կ'ձեռնադրէ , եւ
դպրոցները հաստատելով աւելի նոցա զաւակները կ'կրթէ
եկեղեցւոյ ժառանգները հազնեւելու համար . որով յայտնաւ
պէս կ'իմացուի թէ ուսումն ժողովրդեան մէջ խիստ հազ-
ուագիւտ էր կամ բոլորովին պակաս :

Իսկ վերջի դարերուն մէջ Ժողովուրդը յանկարծ աչբը
բացաւ տեսաւ զինքն զրկուած ուսման ժառանգութենէն
ճանչցաւ թէ ուսումն բանական մտաւոր մարդկային ազդի-
սաւ հասարակ մարդկութեան նշան եւ կենքնէ . շատ զլջա-
ցաւ ու կ'զլջայ տակաւին , որ անցեալ դարերում իւր
մտաւորական աչբը առանց ուսմանորութեան խաւար պա-
հելով աշխարհիս վերայ կուրաբար այս կողմ այն կ'ըմ

խարխալելով Թշուառ աղէտալի կեանք վարեց, փորձով խնդ
հասկցաւ իւր գլուխ եկած այնչափ բազմադիմ չարիքներ,
որմիայն անուսու մնում թեան ժանտաբեր արգասիքն են. ուստի
ձեռք դարկաւ մտաւորական աշխատութեան եւ ահա վեր-
ջին դարուս մէջ շահաբեր արդիւնքը առատապէս կ'աղէ.
Թող տանք այս կարճ խորհրդածութիւնը, որ ընդհանուր
աշխարհիս կ'վերաբերի. դառնանք մեր անմշակ Հայաստա-
նին վերայ մասնաւորապէս խօսելով :

Բուն Հայաստանէն դուրս գաղթական Հայոց երկիրներ,
գործրինակ Պօլիս եւ այլ ուրիշ երեւելի քաղաքներ. բնակ-
չաց Թուոյն համեմատութեամբ բազմաթիւ ժողովրդական
դպրոցներ բացուած կան. որոնցմէ շատերը ընկերական
հոգաբարձութեամբ կ'կառավարուին այժմ. գրեթէ քսան
տարուան շրջանին մէջ բաւական մատենագիր հեղինակներ,
լեզուագէտներ եւ հանճարաւոր մարդիկ դուրս ելան. որոց
թիւ արդէն բազում է եւ պիտի բազմանայ հետ զհետեւ եկե-
ղեցական դասու ուսումնականներէն : Չարմանք, արդարեւ
այն ինչ հին Հայաստանի մէջ կրօնական խնդիրներու վերայ
միայն եկեղեցականաց դասը կ'խօսէր կ'լուծէր եւ կ'վրձ-
ուէր. այժմ անհասակ պատանեաց գրիչներ անգամ կ'խիզա-
խեն այդպիսի խնդիրներու ասպարիզում. ո՛հ, պիտի յառա-
ջադիմեն այնչափ մինչեւ եկեղեցական դասուն սեփական
մրցանակն նոյա ձեռքէն յափշտակելու : Նշան յայտնի կը-
տեսնուի. շատ անգամ արտաքին հակառակորդներէն պատա-
հած կրօնական խնդիրներու մէջ առաւել նորս կ'մրցին
Հայաստանեայց եկեղեցին պաշտպանելով քան թէ մեք.
սուտ չէ, ճշմարիտ է այս :

Բայց ինչպէս խօսած եմք արդէն գաղթական Հայոց յա-
ռաջապիմական քայլը Հայրենեաց երկրօտանի կաղութիւն

չի բժշկեր եւ դուրս վտուած ճրագը անկարելի է որ ընդար-
 ձակ տան մի կեդրոնը լուսաւորէ . վասն զի դեռ մեր անբախտ
 Հայաստանին նահանգաց կամ գաւառներու մէջը խիստ
 քիչ ժողովրդական դպրոցները հաստատուած կան եւ այն
 եւս միայն նշանաւոր քաղաքներու մէջ . որոնցմէ շատերու
 կառավարութիւնը կամ յառաջագիմական քայլը կաղիկաղ
 կընթանայ . չեմ գիտեր երբ պիտի հասնի այն նպատակին . որ
 Հայրենիքէն հեռացած է . իսկ առ հասարակ Հայաստանի
 գիւղորայք , որոնց մէջ քաղաքներէն քառապատիկ աւելի
 բնակիչներ կ'պարունակին , իրենց համար ուսումն կամ զըպ-
 րոց գրեթէ օտար եւ անլուր ձայն մի է . եւ միտքերնին
 այնչափ պատերէ թանձր նախապաշարմունքը մինչեւ կ'կար-
 ծեն եւ կ'խօսեն յաճախ , թէ ուսմունք եւ կարդալ գիտնալ
 Տէրտէրին համար է միայն : Այս է ահա ցաւ մեծ եւ կըս-
 կի՞՞ ուսման պատիւ եւ պարտք ճանաչող ամէն ուսումնա-
 սէր մտաց : Այլը նախապաշարմունք երբ պիտի աչքդ բանաս ,
 Տէրտէր ուլարդապետը Աստուծոյ կողմէն դէպ առ ժո-
 ղովուրդը Բրիտոսի Աւետարանին կամ պատուիրաններուն
 պատգամախօսներն են , չեմ գիտեր ուսմունքը պարսաւօղ
 տգիտութեամբ համրացած ուխտացած ժողովրդեան ական-
 ջին պատգամախօսներուն ձայն ինչ ազդեցութիւն ունի ,
 եւ ինչո՞ւ մեր երանելի Նախնիքները գեղեցիկ բարեկարգու-
 թեամբ հաստատուեն . որպէս զի սուրբ եկեղեցւոյ առեան
 յաճախ կարդացուի Սրբազան գրոց եւ կտակարանին զանա-
 զան ընթերցուածները . ո՛չ ապաքէն ժողովուրդ լսէ , հաս-
 կընայ ու միտ առնէ . մի թէ գիւղացի Հայ ժողովուրդ իր-
 բեւ խուժ , դուժ Սկիւթացի կհանդիսանայ եկեղեցւոյ մէջ ,
 ինչ համ ու ճաշակ կառնէ Հարականաց անուշութենէն
 կամ Սաղմոսաց քաղցրութենէն , Աւետարանին պատուէր-

ներք, Առաքելոց Թղթեր, Մարգարէից ձայներ, անձանոթ
լեզու մի դարձեր են մեր Ժողովրդաց ականջին . թէ կեն-
դանի լինէր Պօղոս պիտի զարմանար թէ ինչպէս Հայ Ժո-
ղովուրդ առանց լսելոյ կ'հաւատայ եւ կ'պաշտէ սուրբ իւ-
րօն իւր վճռոյն հակառակ թէ « Հաւատք իւրոյ են եւ լուր
ի բանէն Աստուծոյ » : Յիրաւի միշտ կ'դրենք եւ կ'խօսինք
թէ Հայաստանեայց եկեղեցին բարեզարդելու համար ու-
սումնական դիմնական եկեղեցականներ պէտք են . բայց մի-
թէ եկեղեցւոյ վայելչութիւնը միայն եկեղեցականաց իմաս-
տութեան զարդով կ'պայծառանայ . քան, աւելի այս զար-
դարանք եկեղեցւոյ հարսի անձին պէտք են . այսինք կամ իմ
սակ ուսման կամ ընտաւորութեան զարդը . մեր հայրենի
Ժողովրդեան համար ռըչափ հարկաւոր է . որ գիտութեան
հանդերձէն մերկ մնալով ժամանակի խտութեան կամ դառ-
նութեան պարտք անելէն ձմեռը կ'մրօի եւ կ'դողայ . ամառ
ապրութեան կ'տապանայ եւ կ'խարշի : Մեր խեղճ հայրե-
նիքը չսրչարդ ուրիշ բան չէ, քան թէ տգիտութեան ժանտ
դահիճը . որ խկզբանէ անտի մեր Հայաստանի տունը իբրեւ
խաւարչտին բանտ դարձուցերէ . դերութեան, սորկութեան
աղքատութեան եւ ամէն կերպ թշուառութեան կապան-
քներով կ'ննդէ եւ կ'չարչարէ :

Ո՞վ է վճռեր Հայ Ժողովրդեան համար, որ այս տգիտութե-
կամ գոխական զնդանին մէջ յաւիտեան տանջուի . մի-
թէ Բրիտանիկարդ ձեռքը կրկին անգամ աշխարհ պիտի
գայ եւ զինքն ազատէ* : Հայրենի . Ժողովուրդը . տղի-
տութեան խաւարային բանդէն ազատելու համար օսկե-
ղէն շղթայ մի պէտք է, այս անխղճի եւ հաստատուն չըղ-
թայէն թող ձեռք զարնեն ու կախուին Հայ Ժողովրդոց
ամէն հասակները . այսինքն ծեր, տղայ, երիտասարդ, պա-

տանի, կին եւ աղջիկ .

Ի՞նչ է այս սոկեղէն շղթան. եթէ ոչ միմիայն ժողովրդական դատի դպրոցը, հասարակաց կրթութիւն, մանկաց դաստիարակութիւնը եւ այլն : Դժուարութիւն այս աւելնէ . ո՞վ պիտի շինէ կամ հիւսէ այս սոկեղէն շղթանը . ո՞հ այս ծարտար ձեռք կամ հանձարեղ արհեստաւորներ, խիստ պուկաս են Հայրենեաց մէջ : Արդարեւ ժողովրդական դպրոց հաստատող ընկերական ձեռքն է, ինչպէս գաղթական Հայոց երեւելի քաղաքներու մէջ կ'տեսնամք բաց գլխաւորապէս բուն Հայաստանին համար ժողովրդական դպրոցի հաստատութիւնը վիճակաւոր առաջնորդաց եւ խիստնաւոր անձինքներու ձեռքով պէտքէ չլինի . վասն զի մեզ Հայրենի ժողովուրդը գեւաւորաց ընկերական հոգւոյն կապի, հասարակաց օգուտ մտածող մարդը դեռ չծնաւ Հայաստան . իւրաքանչիւր մարդը իւր համար կ'մտածէ իւր շահը միայն կ'փնտռէ : Այսպիսի դրութեան կամ վիճակի մէջ եղող ազգին համար կ'ողբար երբեմն երանելի Եղիշէն մինչդեռ Վարդանանց պատերազմին ընկերական հոգւոյն քակտումն կ'տեսնար . « Եւ անձնընտիր լեալ յոյժ բազմանայ լալումն ողբոյս » : Ի՞նչ է անձնընտրութիւնը, եթէ ոչ իւրաքանչիւր մարդը իւր անձն վերադաս կամ ընտիր համարելով ընկերութենէն որոշէ եւ դադանի նման առանձին կեանք վարելով որսի ետեւ երթայ միմիայն իւր որովայնի համար . այս է ահա անձնընտրութեան վատթարագոյն կէտը, որ զմարդ մարդկային ընկերական վիճակէն հորոշէ եւ գաղանային կենցաղավարութեան հետք կ'խառնէ . ալ այնուհետեւ մարդոյն կեանքը դադանաց կեանքէն չեմ գիտեր ինչ զանազանութիւն ունի : Ահա տոյնալիս կեանք կ'վարէ մեր դժբաղդ Հայաստան :

ընկերական հոգիէն զուրկ , միաբանական հոգիէն օտար . որով ուղիղ կհասկցուի թէ մեր Հայրենեաց Հայերը առանձին կապրին եւ ընկերական հոգին մեռած է իրենց սրտին մէջ :

Ուստի քանի որ այս ընկերական հոգին կենդանացած չէ , ո՞ր կ յուսայ որ Հայաստանի իւրաքանչիւր դաւառներու մէջ ժողովրդական դպրոց հաստատուի : Ընկերական հոգւոյն կենդանութեան շունչ տուող պէտքէ , եւ այս շունչը փչող Վիճակաւոր առաջնորդաց բերան պէտքէ լինի , որուն հետ եթէ Հայ իշխանաց ազգասիրական շունչ միանայ , անտարակոյս ընկերական հոգին հասարակաց սրտին մէջ յարութիւն կառնէ . որով եւ ժողովրդական դպրոցին հաստատութեան դիւրին եւ հարթ ճանապարհներ կբացուին . շահախնդրութեան հոգին կմեռնի , ամէն մարդը թող տալով իւր անձն ընկերին եւ հասարակաց օգտին համար կմտածէ ու ձեռքէն եկած օժանդակութեան բարիքները չի խնայեր :

Իսկ թող այս տեղ աւագ կարգայ Արծիւ խեղճուկ Հայաստանին , մինչդեռ կտեսնայ իւր շատ վիճակներու մէջ , որ իշխանաց միաբանական հոգին հոգեւոր առաջնորդաց շունչին հետը միութիւն չունի : Թէ իբրեւ Աստուած ուղիղ դատաստան կարող ես տեսնալ , ու չիմ ընթերցող , ճշմարտութեամբ քննէ ու որոշէ . աւելի մեղադրութիւն ո՞ր դասուն կվերաբերի , կամ ո՞ր խումբ աւելի դայթակղութեան քար եղածէ ազգային յառաջադիմութեան ոտքին : Գիտեմ , աշխարհականաց դատաստան կվճռէ թէ ազգին յետախաղաց վիճակին պատճառը Եկեղեցականաց դասն է եւ աս ալ կխօսին թէ երկպառակութեան պատճառն ալ անոնք են : Ի՞նչ փաստ եւ ապացոյց ունին

այս դատաստանին ուղղութեան համար. Բրիտոսի տեսուչ մերոյ անուտ վարդապետութիւնը և Եթէ աղնանհամեցի իւր համեմեցի. կամ « Դուք էք աղ երկրի եւ այլն. ասով յայտնի կ'մացնեն մեզ Թէ Եկեղեցականաց անհամութիւն է, որ ժողովուրդը առանց աղի մնալով երկպառակութեան անմիաբանութեան նեխութիւն կ'տրէ եւ վերջապէս կ'ապականի ոչնչութեամբ : Իսկ Արծիւը այս դատաստանին ղէմը մեր հին պատմութեան այն նշանաւոր դէպքը կ'յիշեցընէ Հայ ժողովրդոց : Պարթեւ մեծն Սահակ Հայաստանեայց եկեղեցւոյ անուշահամ աղն, ինչ համ կամ ազդեցութիւն կարողացաւ տալ իւր նախատես խրատներով այն անմիտ խորհրդակորոյս եւ խստասիրտ նախարարաց : Այս օրինակ բաւականէ համոզել ընթերցողները. որ շատ անգամ ժողովրդոց կամ իշխանաց խտասրտութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ անուշահամ աղերը ռոտնակոխ առնելով արհամարհներեն. ուրեմն շատ իրաւացի է այս խօսքը որ մեր Հայաստան շատ անգամ իւր վեհ բարերարները դատապարտութեան չուանէն կ'ախելով մերժերէ. նոքա տ. Բրիտոսի օրինակին հետեւելով « Թողեալ լիցի տուն ձեր աւերակ » ասելով ետ քաշուեր են եւ Հայաստան աւերակ դարձեր է :

Իսառնանք մեք կրկին առաջին առարկային վերայ. Հայրենեաց լուսաւորութեան իսկական պատճառ ժողովրդաւ կան դպրոցն է. այս դպրոցները իւրաքանչիւր դաւառի մէջ հաստատող ընկերական հոգին է. այս հոգին վառող եւ կազմող Հոգեւոր առաջնորդաց եւ քաղաքական իշխանաց միաբանական կամքն է : Յանկալի եւ զօրաւոր են այս միջոցները. ո՛հ, քեզի համար կ'ապականին դժբաղդ Հայաստան. այս պակասութեան համար է, որ քու, չորս միլիոն ժողո-

փութգէն գեա տմենափութք մասն հազիւ գրել ու կարդալ
 գլխէ : Յերաւել ժողովրդական դպրոցին մէջ կարեւոր միւ-
 ջոցն ալ նիւթական պէտքն է , ասոր համար չստերը կ'կար-
 ծեն թէ Հայաստանը ագրատ եւ չքաւոր է , կարողութիւն
 չունի իւր զաւակներ կրթելու բնական դպրոցներ հաս-
 տատել : Թէ ձայն ունիա , որչափ կարեւոր տղայակէ մեր Հայաս-
 տանի խուլ ակունջներուն , թէ քո կարծածութիւնդ եւ չը-
 բաւորութիւնդ , ոչ ապաքէն տնտես մնա թեանդ արդա-
 սիքն են : Չեմ կարծեր որ ժողովրդական դպրոցներուն պա-
 կասութեան պատճառը նիւթական պէտքն է , որչափ ըն-
 կերական հոգւոյն տարտամութիւն կրտ մանտանդ մեռե-
 լութիւն : Ասան զի միութեան հւ ընկերական հոգւոյն
 ազբիւր մշտնջենաւոր առատութեամբ կ'բղխէ կենդանի
 ջուրերը : Բայց շահախնդրութեան հոգին ապահ ժլատու-
 թեամբ այս աղբււրներուն ակները խցիւր է : Չուրի վտակ-
 ներուն ընթացքը առանց իրար խառնուելու իւրաքանչիւր
 մարդը կ'նայի որ միայն իւր պարտէզը ջրէ , հասարակաց հը-
 բապարակ կամ պարտէզը մնացելէ բոլորովին չոր ու ցա-
 մաք ծարաւուտ երկրի նման : Թող ընկերօրական հոգին
 բանայ այս վաղ ժամանակէ խցուած աղբււրներուն ակ-
 ները : Թող վտակները իրար խառնուելով գետերու նման ա-
 ռատութեամբ վազեն հասարակաց հրապարակներու մէջ :
 Թող խնայութեան աւազան մի կաղմուի հաւատարիմ արն-
 տեաներուն պաշտպանութեան տակը : Կ'սեմնաւ այն ժա-
 մանակը , հոգի ազգասէր , թէ որչափ ժողովրդական դպրոց-
 ներ կ'բացուին Հայաստանին մէջ , կարծեմ այս խնայու-
 թեան աւազանին ջուրը վարժարանաց պարտէզները ջրելէն
 ետքը ուրիշ զանազան կենցաղօգուտ շահաւետութեան
 սյգիւններն ալ կ'ջրէ : Եւ այնքն բաւական կ'լինի սյլ եւ այլ

ընկերութիւններ կազմել մեծօշոտ փաճառականութեան
 ճանապարհներ բանալ, ճարտարութեան արուեստների ծաղ-
 կեցնել եւ մեր Հայրենեաց աճալի մնացած ընդ արծակի եւ
 բարեբեր դաշտերը մշակել : Հերիք չէ Հայաստանի աղ-
 բաս զաւակները ուրիշի գործած կտաւ կամ կտրած կօ-
 շիկներ հագնին : Այս օգտակար միջոցները մի յուսար թէ
 կը յաջողի մեր հայրենեաց համար սուանց կանոնաւոր կըր-
 թութեան . որ է ըսել դարձեալ, թէ յառաջ ժողովրդական
 դպրոցները հարկաւոր են , վասն զի կոյր եւ անուսումն
 միտք ոչ ինչ բան կարող չէ յառաջ տանել . Յս ապաքէն
 ընդհանուր աշխարհի թշուառութեան եւ աղէտներու
 պատճառը միմիայն մտաւորական կուրութիւն է :

Եթէ մեր Հայաստան այս դարերու մէջ չի թշուա-
 րութեան կեանք մի կ'վարէ, ինչ է պատճառ հարցուր թող
 սուրբ Եղիշէն քեզ պատասխան տայ այս խօսքը . « Եղբոր
 զրկի ի ճառագայթից արեղական եւ տղիտութիւն զրկի
 ի կատարեալ կենաց » Ճշմարիտ է այս վճիռ , միայն ու-
 սումն եւ գիտութիւն է , որ մարդ կային ազգի առ հասա-
 ըակ կատարեալ կեանք եւ երջանկութիւն կ'կազմէ : Եթէ
 այսպէս է , ինչ կեցեր ենք . ժողովրդական դպրոցներուն փակ-
 ուած դռներ բանանք . որպէս զի Հայաստանէն խռոված
 երջանկութիւնը ներս մտնէ դարձեալ : Ահ մեր Սախնի
 Հայկազանց փառք ու բարգաւաճանք բերող ցանկալի եր-
 ջանկութիւն , հազար տարի եղաւ ըս սիրելի Հայաստանէն
 երես դարձուցած հեռացեր ես . ով արդ եօք միջնորդ կամ
 խաղաղարար բերենք քեզի համար . որպէս զի դու կրկին
 անդամ դառնաս Հայաստանին տունը , ողջոյն տաւ հաշ-
 տուիս եւ համբուրես նորա տխուր զաւակները : Գիտեմ ,
 դու շուտ կ'հաշտուիս եւ կ'դառնաս դարձեալ դէպ ի սի-

րելին քո Հայաստան , եթէ Վանական եւ Ժողովրդական
գպրոցներէն կրթեալ , դատարարակեալ , լուսաւորեալ Հայ-
րենեաց որդիքները հանդէս կազմելով ղիմաւորեն քո
առաջ . անշուշտ հաւատարէք , ով Հայկազունք , մեր մթըն-
ցած Հայաստանին վերջին փառաց արեւը առջինէն աւելի
պայծառ պիտի ծագի :

ՏՓԽԻՍ ԳՐԱԼԱՔ

ՌՈՒՍԻՈՅ Կովկասեան իշխանութեան մէջ ամենէն գլխա-
ւոր եւ երեւելի քաղաքն է Տփլիս . Վրաց Թագաւորանիստ
մայրաքաղաք եղած էր յառաջագոյն . որ 1801 Թուականին
Պօղոս Ա կայսեր օրով անցած է Ռուսաց ձեռքը :

Իւր դիրք ձորամէջ է , Վուր գետին ափը շինուած .
բուն քաղաքն է գետին հարաւային արեւմուտք , որ յառաջ
շատ փոքր ու անշուք է եղեր . իսկ այժմ ընդարձակ եւ
լայրաչափ փողոցներով , գեղեցիկ եւ պայծառ շէնքերով
երեւելի քաղաքաց կարգը կ'համարուի . մանաւանդ բնակ-
չաց յառաջագիւծութեամբ , որ ըստ ամենայնի յաջողա-
կութիւն ունին քաղաքական , ուսումնական , արհեստական
վաճառական եւ զինուորական կարգաց մէջ :

Գետի միւս երեսն է Հալուապար ասուած Թաղն , որոյ
դիրք դարաձեւ ստորոտի վերայ ինկած է . մաքուր է եւ
զով այս տեղի օդը բնակիչք ըստ մեծի մասին Երեւանէն
եւ այլ տեղերէ գաղթած Հայերն են :

Քաղաքացի պատուաւոր եւ մեծամեծ անձինք քաղքի
մէջ կ'եստեն . նմանապէս ամէն շուկաներ , առեւտրական

տեղեր , դատարան եւ այլն քաղաքի մէջն են . Տփխիսոյ բաղնիքներ ամէն հանքային ջրեր են . Վրացիք Թրպիլիս ասած են այս քաղաքին , որ կ'ընշանակէ տաք ջուր . այս անունէն ելած է Հայերէն կոչել Տփխիս .

Խմելու աղբիւր երբեք չի գտնուիր իւր մէջ . առ հասարակ իւր գետէն կ'խմեն ջուր . այն գետն է , որ քաղաքի բոլոր պէտքեր կ'հոգայ , ապականութիւններ կ'մաքրէ կ'լուանայ . ջրաղացներն ամէն այս գետով կ'բանեցուցեն . տօլապներ հնարած են որով ջուր կ'հանեն այգեստաներուն վերայ . Հարժական բաղնիքներ ունին յատուկ ամառուան համար շինած . Քրիստոսի մկրտութեան խորհուրդ ջրօրհնաց կարգ այս գետին վերայ կ'երթան կատարել Ռուսն եւ Հայ առանձին առանձին մեծամեծ եւ շքեղ հանդէսներով , զինուորական եւ եկեղեցական փառաւորութեամբ , որ մասնաւոր ստորագրութեան արժանի է . հապա այնչափ առատ ձկունք որ կ'հանեն այս գետէն : Վերջապէս իւր գետ Տփխիսեցոց կեանքն է . եւ իրաւամբ իրենց համար նուիրական համարուած է . վասն զի բան զԴանդէսն Հնրկաստանի առաւել է սա Տփխիսեցոց .

Շէնքերու մէջ երեւելի են Վոխարքայի տուն եւ պարտեզ . այն մեծ հրապարակի տուններ , խանութներ եւ կարւանսարաններ . մանաւանդ Թամամշով Կաթրիէլ Հայ աղնուականին կարուանսարայն , որոյ նման շքեղ եւ կանոնաւոր շինուած հազիւ տեղեր կ'գտնուին . քառայարկ կամարակապ քարէ եւ աղիւսէ շինուած եւ ներսէն ներսուած . դռներ պատշգամներ կ'բացուին չորս կողմէն այն մեծ հրապարակին վերայ , որոյ մէջ տեղ ինքն շինուած է . այս տեղ կ'նստին գլխաւոր հարուստ վաճառականներ եւ սորա մէջ տեղ շինուած է մի շքեղ Թէատրոն , որ նուիրուած է Տէրութեան .

եւ այժմ Ի տալացի գերատաններ վարձու բռնած ու ամէն շաբաթ երկու երեք անգամ կ'ներկայացուցեն :

Արշակունեանց աշնուական աղա Վարդանի ապարանք տեսնող արդարեւ թագաւորաւայել կ'համարի. որ բոլոր Տփիսայ եւ Կովկասեան քաղաքներուն մէջ առաջինն է իւր մեծագործ եւ բազմածախ շէնքով. շատ տեսնողներ կ'վայեն որ Կ. Պօլսոյ Տօլմայ Պահշէի արքունիական պալատին թէ հաւատար չլինի, ոչինչ չէ պակաս. բաւական է ասել որ միլիոն մանեթ ծախս արած է. բոլոր պէտքեր Եւրոպայէն բերել տալով. Երեւելի է նա եւ այն մեծ քարաշէն կամուրջ, որ Վարանյով իշխանի փոխարքայութեան օրով շինուած է գրէթէ 30 տարի յառաջ. որոյ իյիշատակ նոյն կամուրջին գլուխ մի պատուական արձան կանգնելու վերայ էին. այնինչ մեք այն տեղէն էլանք :

Փոխարքայ կ'նստի Տփլիս եւ կիշիւկ յայտկոյս Արվասու եղեսլ բոլոր Ռուսաստանին մինչեւ Դ Պարսից եւ Օսմանեան սահմաններ :

Քաղաքական ծախսով արքատանոց եւ հիւանդանոց կայ շինուած, ուր կ'սնամուին անձար եւ անկարանձինք : Հոգեւորական, զինւորական եւ նահանգական կամ քաղաքական ուսումնարաններ կան բացեալ տէրութեան ծախսով. այս նահանգական ուսումնարանին մէջ կրնորունիին ամէն ազգէ աշակերտներ եւ կ'ուսանին զանոցան լեզուաւ եւ զանազան գիտութեամբ. կայ եւ անղլանյ ուսումնարան գիշերթիկ. ուր կ'ուսանին առ հասարակ ամէն ազգէ աշակերտ : Արքունիական տպարան կայ յատուկ, որոյ մէջ կ'գտնուին Ռուսերէն, Գաղղիերէն. Հայերէն, Վրացերէն, Պարսկերէն տառեր : Հեռագիր (թեւեղրաւ) կայ հաստատուած մինչեւ ի Փօթ. որ սեւ ծովու

եղերք նուազանդ խոտ քաղար մի է :

Տիֆլիսոյ բնակչաց թիւ 25—30000 տուն կ'հաշուին .
բնիկ քաղաքացի բոտ մեծի մասին Հայերն են . իսկ մնաց
եւրոպացիներն Ռուս, Արաբի, Պարսիկ, Մալական, Գերմանա-
ցի եւ այլն . Այս Գերմանացիներ քանի հազար տուն կան
բնակուած թէ այս տեղ եւ թէ Գանձակու կողմեր . այլ
թէ ինչպէս դաղթած են ինձէ . յայտնի լաւ յաջողակութիւն
ունին հողագործութեան , տնկաբանութեան , մեքենական
արուեստից եւ զանազան ձեռագործներու մէջ . Հայուա-
րու մէջ մի առանձին թաղ որոշած են իւրեանց համար ,
այն տեղ կ'բնակին խմբովն եւ կարգ կարգ ծառատունկ-
ներով , կանոնաւոր շէնքերով եւ գեղեցիկ պարտէզներով
զարդարած են նոյն թաղը :

Որքայիք այն ազգիներն , որ թէ կրօնքով եւ թէ քաղա-
քական իշխանութեամբ միշտ մերձաւոր եւ կախեալ էին
Հայերէն . շատ անգամ եւս անխտիր մի ազգ համարված են
մեզ հետ նախնի դարուց մէջ . նոյա մերձաւորութիւն եւ
մեր ազգի քրիստոնէականել կամ բնական բարեխոսութիւն
այնչափ վստահացուցներն մեր նախնիք . որ նոցա համար
շատ կատարելութիւններ եւ իրաւունքներ հնարեր են .
ինչպէս է ասորբ Մեսրոպին գիր շինել , մեր Հայոց կաթո-
ղիկոսներէն ձեռնադրութիւն եւ կանոն վեր առնել . կամ
ինչպէս մեծին Տէգրանայ , Տրդատին եւ ուրիշ թագաւորաց
օրեր իբրեւ նախարար կամ կուսակալութիւն համարուած
էին Հայոց :

Կիւրիոն կաթողիկոսն եղաւ , որ 596 թուականին վեց
երրորդ դարու մէջ ընդունեց Քաղկեդոնի ժողովք եւ
բոլոր Արցախի միացուց Յունաց հետ կրօնքով . որով եւ
բաժանեցան Հայաստանէն . սակայն կտր իրենց եկեղեցական

ծիսերու մէջ շատ բան Հայոցմէ մնացած : Այժմ Ռուսն եւ Վրացին անխտիր մի ազգ համարուած են :

Քարթուլի կանուանեն զիրենք Վրացիք, Քարթլոսնա- հապետին անուանով . որ Հայկայ եղբայրներէն էր . սոցա լեզուն գիտցողներ կ'ատմեն թէ իսպառ Հայերէնէ շինուած մի ձիւղ է . եւ շատ բառեր կան որ ձիւղ մեր լեզուով կ'արտասանեն : Այս ազգ բաւական ժամանակ թագաւորութիւն ունեցած է . բայց դրեթէ մասնաւոր եւ ամփոփ իշխանութեամբ եւ միշտ պաշարեալ թշնամի ազգերէն . որ մինչեւ անցեալ դարը տեւեց . սոցա վերջին թագաւորն անկարող ու անօգնական մնալով , սոյն քաղաք եւ իւր ողջ թագաւորութիւն յանձնեց Ռուսիոյ :

Վրացոց իշխանութեան օրէ մնացած կայ մի տեսակ ժառանգութիւն , որ միջեւ ցայժմ կ'տեւէ նոյն ազգի նախարարազարմ եւ ազնուական ցեղերու մէջ . գեղացի ժողովուրդներ կան որ իրենց ինչքն ու ստացուածք , հողն ու կալուածք , ոչխարն ու տաւար , իրենց աշխատութիւն ու քրտինք , միով բանիւ՝ իրենց անձն ու կեանք սեպհական է այն ազնուականներուն . այսպիսի ժողովրդեան ճորք կասեն Տփիսիսեցիք , որ կ'նշանակէ սորուկ . ազգաւ Վրացի են եւ գրէխովին տնով ու տեղով , կ'ինով զաւակով իրենց տիրոջն են . հողին միայն ազատ է Արարչին պահուած : Բարեբաղդ են այն ճորտեր որ գթած ու խղճմտանքով տէրեր կ'ունենան . այնչափ իրաւունք ունին տէրեր իրենց ճորտերուն վերայ , որ թէ կանաւքն ու զաւակներ ձեռքերէն առնէ կամ տընով ու գեղով ուրիշիմը ծախէ կարող է : Մի քանի Հայ ազնուականք էլ կան որ ճորտեր ունին , ինչպէս են Արղու- թեանք , Բեհրութեանք եւ այլն . բայց կ'երեւի որ սոքա Վրաց թագաւորութեան օրով պարգեւ առած լինին :

Այս տարի Ռուսաց ազատասէր բարերար կայսրն Աղէք-
տանդը Բ յատուկ հրովարտական ազատութեան հրամանն
հանեց այս ճորտերուն , այլ թէ ինչ պայմաններով , մեզ
անյայտ է :

Վրացիք մայր եկեղեցի ունին Տփլիսոյ մէջսուրբ Աթոն ,
որ քաղաքի ամէն եկեղեցիներէն շքեղն է , զարդարուած
իներքուստ ճարտարագործ եւ գեղեցիկ նկարներով ,
ձուլածոյ պատկերներով , ոսկեհատ , մարդարտաշար եւ ակա-
նակուռ զարդերով , որ յիրաւի զարմանք կբերէ տեսողոյ .
նորոգուած է այս եկեղեցին եւ պայծառացած այսպէս
Ռուսաց ձեռքով . այն ժամանակ երբ Տփլիսոյ տէր եղաւ
Ռուսն , ցոյց տուեց իւր բարեպաշտութիւնն ոչ միայն այս
ուսձորը նորոգելով . այլ Վրաց ազգի մեռած թաղաւոր-
ներու շիրիմներ շինեց զարդարեց արձաններով ու զանազան
ձեւերով , եւ ուրիշ շատ արեւելութիւններ արաց : Այստեղի
եկեղեցականութիւնն առ հասարակ Ռուսաց լեզուով եւ
արարողութեամբ կկատարուի : Երկու հազար տուն
Վրացի հազիւ կան Տփլիսոյ մէջ . քիչ կ գըտնուին
իրենց մէջ արհեստաւոր կամ վաճառական . աւելի
զբոսասէր պարագայդ մարդիկ են : Բուն Վրացիք 50—
60000ի չափ հազիւ կ հաշուին . կան թէ եւ Վրացերէն իւր-
սօղ ուրիշ մանր ազգեր . որ Վրացի կ հաշուին , որք առ հա-
սարակ կէս միլիոնէն աւելի ազգք կը կազմեն :

Տփլիսոյ բերդ շինուած է չալուապարու մէջ . Սուր
գետին ափը . սեպաձեւ չոր ապառաժինը վերայ . սորա մէջ
կը բնակին բերդակալ զինւորներ եւ այս տեղ յանցաւ որոյդ
բանդն է : Բերդին մէջն է մի փոքրիկ հնաշէն եկեղեցի
գմբէթաւոր , որոյ մէջ կայ մի սուրբ նահատակի գերեզման
ասեղնագործ սփռոցներով զարդարուած . Մամիկոնեան

մեծին Վարդանայ դուստր սուրբ Շուշանն է այս նահա-
տակ. որ Ե դարուն մէջ իւր էրիկ Վազգէն Վրաց Թա-
գաւոր բրիստոնէութիւն ուրացաւ, եւ մեր Շուշանիկ հաս-
տատ մնալով ի սէր ի հաւատս Բրիստոսի առաքինաբար
մարտիրոսացաւ, սոյն բերդի ապառաժներուն վերայ Թափե-
լով իւր սուրբ արիւնը. սորա համար է որ ամէն Հայ սիրտ
սրտակաթ բաղձանօք երբ այս տեղ կ'մերձենայ՝ ներքին
հոգւով եւ սուրբ զգացմամբ կը լցուի. գիտես թէ Հայու
արեան հոտ կ'բուրէ այն չոր ու դարաւոր ապառաժներէն

Քանի տարի յառաջ բոլորովին անյայտ եւ աննշան էր
այս գերեզման. Տփլիսեցիք առ հասարակ կը կարծէին որ Վը-
րացին նահատակի գերեզման է. մինչ անցեալ տարիներ, ինչպէս
կ'պատմեն մի ազգասէր ուսումնական Հայ երիտասարդ բնէն,
լով մեր եւ ուրիշ ազգաց պատմութիւնները կ'ստուգէ որ ա-
խիկ Շուշանիկն է եղած. սորա վերայ բաւական վէճ կ'բաց-
ուի Հայոց եւ Վրաց մէջ. վերջապէս կ'հաստատուի Հայ
երիտասարդին խօսք. եւ այն ժամանակ Ռուսերէն կ'գրեն
գերեզմանին վերայ ՍՈՒՐԲ ՀՈՒՇԱՆԻԿ . մէկ կողմէն
եւս Վարինեանց գիտնական եւ հայրենասէր Յակովբ վար-
ժապետն մի ոտանաւոր կ'գրէ իբրեւ ի բերանոյ ծերուկ
ծառային Մամիկոնեանց տան եւ կ'հրատարակէ զայն Մե-
ղու Հայաստանի լրագրին մէջ, որ կ'տպագրուի ի Տփլիս,
այսպէս քիչ քիչ կ'յայտնուի ազգայնոց եւ այնուհետեւ
ուխտաւորները կ'յաճախեն երթալ Տփլիսոյ բարեպաշտնե-
րէն. մինչեւ անցեալ 1860 թուին նոյն հայրենասէր եւ
արդիւնաւոր վարժապետն մի Թատերգական ողբերգութիւն
յօրինեց Շուշանի նահատակութեան վերայ եւ ներկայա-
ցոյց զայն քանկցս անգամ Տփլիսոյ հասարակութեան. զոր
տպագրութեամբ հրատարակեց այս տարի : Այսպէս առաւել

կենդանացաւ յիշատակ Սրբուհւոյն խորտ Հայ Ժողովրդոց :

Տփլիսոյ մանրամասն ստորագրութիւնն շատ տեղեակ անձինքն կ'կարօտի և երկար թերթերու . մանաւանդ որ արդէն քանիցս գրուած ու տպագրուած կան. մեք որչափ գրեմք շատ պակասէ, գուցէ եւ տեղ տեղ սխալ . ուստի ընթերցողաց ներողամտութիւնն խնդրելով՝ քիչ մի եւս այն տեղի ազգայնոց վիճակն ստորագրեմք :

Հայեր այս քաղաք գաղթական եկած են Անիէն . մէկ մասն եւս 1828 թուին Պաքեւիչ Ռուս զօրապետին օրով Երեւանէն, Դաւրիթէն և այլ տեղերէն են. որ Պարսից բռնութիւններէն փախչելով խուժք խուժք դիմեցին Տրփլիս իբրեւ ազատութեան քաղաք . թէպէտ ուրիշ կերպով էլ կ'պատմեն այս գաղթականութիւնը . : Կան մի քանի թաղ, որ բնակիչներ իրենց հայրենեաց անուանով կ'կոչուին . նմանապէս եւ եկեղեցիք . զոր օրինակ, Երեւանցոյ Թաղ . Շախաթեցոյ եկեղեցին, Էջֆաթնեցոյ եկեղեցին, Մոզլեցոյ սոբէ Գեորգ և այլն : Բիւզ մասն էլ արժանայիշատակ Վարապետ Եպիսկոպոսի հետ եկած Վարնոյ գաղթականներէն են : Տփլիսոյ քաղաքական կերպարանք տուող եւ զայն յառաջացուցող ու անուանի արօղ Հայերն են . սխեւալ Անուոյ գաղթականութենէն մինչեւ ցայսօր . քաղաքացի կոչուելու կամ որ նոյնէ Ազնուականութեան պատիւ ունին Հայեր . որք սոյն պատուոյ զօրութեամբ իրաւունք ունին Վոյսեր ներկայանալ, խօսիլ եւ իրենց տուն ընդունել . տուրք տալէ և ամէն հարկերէ ազատ են . և ուրիշ տեսակ մեծամեծ ու ազատ իրաւունքներ ունին : Ամենէն պատուաւոր ու հին ազնուականերն են Արղութեանք . որոց սիրունգէն էր երկայնաբազուկ գիւլազն Մովսէս Կնեսազ զօրա-

պետ Ռուսաց տէրութեան. որոյ համբաւ եւ անունն հռչակուած է արդէն ամէն երեւելի ազգաց ու աշխարհաց մէջ, իւր քաջութեան անկործան ի թող է Վովկա լեռ. այն ահա զին սարեր եւ ձորեր Մովսէս զիւցազնոյն յաղթական դորձքեր կը պատմեն. եւ այն ապտամբ լեռնացի ժողովուրդ, որ երբեք անպարտելի կ'կարծէր զինք, զիւցազնոյս սրով մաշեցան ողջ. ստուերն անգամ բաւական էր սարսափեցուցանել թշնամին. իւր անհամեմատ ձիրքերով, կորովի եւ առաքինի դորձքերով, անչափով տահալութիւն եւ պատիւ ունէր Տէրութեան առաջ, եւ մեծամեծ բարիք ու պարծանք կ'առնէր մեր ազգի համար:

Բէհբութեանք. որոց ցեղէն էր Բարսեղ Անեպի, որ անդեալ տարուան Արեւելեան պատերազմին ահաւոր ու անհնարին յաղթանակներ կանէր Արսայ բռնակին մէջ, առաւել իմաստուն հնարներով եւ բնական ճարտարութեամբ, Ուրիշ անգամ կ'թողուէր այսպիսի մեծանուն արանց յիշատակներ եւ զիւցազնական գործքերը գրել ի տեղեկութիւն ընթերցողաց. քաղելով նոցա պատմութիւններէն կամ հաւատարի լուրերէն: Բաց իսոցանից երեւելի են Ամատունիք, Արշակունեանք (այն մեծ ապարանք շինող), Լորիս Մէլիքեանք, Թամամչեանք, Միրզայեանք եւ այլն. Նա եւ Արծրունեանք, որոց ցեղէն է պատուական եւ հայրենասէր Երեմիա իշխոնն. որ իւր գովելի վեհ ձիրքերով խոհեմ եւ իմաստուն հանճարով, իրաւասէր եւ ազգասէր սրտիւ Տէրութեան եւ առ հասարակ մեր Ազգին առաջ ակնածելի ու հաւատարիմ պատիւն ընդունած է: Այս ազգին վերայ հետեւեալ թիւերով մասնաւոր տեղեկութիւն մի գրել պատիւ կ'համարեմք մեզ. մասնաւոր յերախտադիտութիւն նորին բարերար խնամոց, զորս առատօրէն վայելեց մեր Վապուրական Արծուին իւր պանդխտութեան մէջ:

Իսն մի կարգ էլ յարգելի եւ ազնիւ անձինք, որք խումբ
խումբ եւ ընկեր ընկեր կ'կենան ու կ'շրջին. սոքա են որ
կ'սորհին եւ կ'բրտնեն ժողովրդեան կենաց ներկայ եւ
ապագայ բարեքը. իրենց միտքն ու հոգին կ'աշխատեցնեն
մանկանց դաստիարակութեան. երիտասարդաց կրթութեան
արանց իմաստութեան, կանանց կատարելութեան եւ առ-
հասարակ Ազգայնոց լուսաւորութեան համար : Պատուել-
լի ուսումնականք են սոքա. որ թէպէտեւ սակաւ այլ զօրա-
ւոր, յառաջագէժ իրենց հանճարով, դործունեայ իրենց
կատարելութեամբ, ազատ եւ անվեհեր անձնանուէր ազգա-
սիրութեամբ :

Այն արժանաւոր անձինքն են սոքա, որոց ԼՈՒՍԱՒՈՐԵԱՆ
տիտղոսը կ'նուիրէ այս դար. որոց ԲԱՐԵՐԱՐ անունը կ'ըն-
ծայէ Հայրենիք :

Այս Տփիսիոց ուսումնականք շատ մասամբ աւելիներ-
հուն ու մտածող անձինք են. այսպիսեաց արդիւնքն է որ
ազգայնութեան հոգին այնչափ վառ ու կենդանի պահած
է : Այսպիսեաց շնորհքն է որ Տփիսիոց հասարակութեան
մէջ տիրել սկսած է ուսումնասիրութեան փափաքն ու
օգտակարութիւն. արդէն լրագիրներ ու իմաստասիրական
կամ բարոյական ամսաթերթներ կարդալու եռանդը վառ-
ուած է. որոյ ապացոյց կարօղ եմք համարել Մօսկուայ
տպուած Հիւսիսափայլ եւ Հասարակ ամսագիրներ, Տաճ-
կաստան եւ ուրիշ տեղեր տպագրուած ազգային շաբաթա-
կան լրագիրներ, բարոյական իմաստասիրական եւ հայրենասի-
րական թերթեր, թէ որչափ փափաքով կ'ստանան ու
կը կարդան :

Մասնաւորապէս իրենց յառաջագիմութեան ծնունդն է
Մեղու Հայաստանի շաբաթաթերթին եւ Հայոց աշխարհի

Առւելի ամսաթերթ որ իրենց մէջ կ'հրատարակուին ,
Էնֆրիաճեանց Պ . Աւետիքի գրատուն և Վերժանութեան
թանգարան , որ նոր սկսերեն բանալ . նոր նոր հեղինակու-
թիւներ յօրինել ու հրատարակել . ուսումնարաներ բանալու
եւ բարեկարգելու եռանդ ու փոյթ ունենալ , տպագրա-
տուններուն օրէ օր աւելնալ ու ծաղկիլ . որոց կարգին մէջ
անուանի է Մէլքումեանց և Էնֆրիաճեանց տպարանը ,
որ հետզհետէ յառաջադիմութեան մէջ կրնթանայ :

Տփլիսոյ հասարակութեան բնական է գրեթէ Տեսա-
րաներ թատրոններ և ուրախութիւններ սիրել . սորա համար
ուսումնասինք հնարած են ազգային թատրոններ , ինչպէս է
Շուշանիկի և Միհրդատայ ողբերգութիւններ . կամ քաղաքա-
յւրոց շոսյութիւն ու վնասակար սովորութիւններ կրթելու
համար , ինչպէս է Պատկանեանց Պ . Միքայէլին շի-
նածն :

Ուր որ ման դաս քաղքի մէջ Հայերու կ'հանդիպիս ,
Հայերն են փողոցներ ու հրապարակներ զարդարող , առեւ-
տուր արող . մեծաշէն տներ կարուստասարաններ եւ այգիներ
ուռեցող . գատարաները նստող Հայ . գօրապետ , ծարտարա-
պետ , բժիշկ , ուսուցիչ , վաճառական , սեղանաւոր , արհես-
տաւոր սոցա շատ մասը Հայք են . որ մինչեւ ի Փարիզ , Լոն-
տոն , Հնդկաստան , Պարսկաստան եւ Տաճկաստան վաճառ-
ականութեամբ յարաբերութիւն ունին . աւելի Մօսկու-
այի եւ Պետրբուրգի մէջ :

Նախնի Հայոց կերպարանք ու հոգին Տփլիսոյ Ազգայ-
նայ մէջ կ'տեսնուի փոքր ի շատէ . այն վեհ հասակներ , պայ-
ծառ ու հսկայափայլ պատկերներ , այն գոռոզ սիրտեր եւ
սէգ իշխաններ . այն եռանդուն եւ սրտող Ժողովուրդ , որ
ոչ լաց գիտեն ոչ տրտմութիւն . այլ միշտ ուրախ յաջողակ :

Այն Հայկազն-զօրապետներ, իշխաններ ու հասարակութիւն իւրաքանչիւր հանդէսներու մէջ որ կ'մտնեն. դեռ չըտեսնօղ կամ փափագօղ մի Հայու աչք յանկարծ որ տեսնէ այնպիսի փառաւորութեամբ, նոր Հայ նոր Ազգ կըդառնայ. մեր նախնեաց պատկեր նկատելով սոցա վերայ : Շքանշաններ, զօրանշաններ, սուրեր ու զէնքեր Հայերուն այնպէս վայելուչ էկած են, իբրեւ թէ նոցա սեպհական տէրեր լինէին. մեծութիւն, իշխանութիւն այնպէս արժանաւորութեամբ կ'վարեն. ինչպէս իրենց բնական լինէր :

Բայց եւ գովելի մեր Ազգայինք այսչափ մեծամեծ գործոց մէջ ճարտարութեամբ եւ անպակաս կատարելութեամբ իրենց հաւատարմութիւնը յայտնած են միշտ մեծազօր Տէրութեան, որով եւ Նորին մեծութիւն փտահութեամբ այնչափ քաղաքական երեւելի գործքեր յանձնած է Հայոց ձեռքը :

Շարունակութիւն յաջորդ խոսով :



ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ միանկշիռ եւ գերյարգոյ առաքինութիւն է եւ իսկական բարեաց բուն արմատ :

Ամէն բարիք որ իսկական են. հասարակաց սահմանեալ են, եւ որ չէ հայրենասէր ինչպէս հասարակաց բարիք խորհել կամ առնել կարօղ է :

Մի չքնաղ եւ զօրաւոր ձիրք է գրեթէ մարդկային սեռի մէջ. եւ սովաւ որք ուսան երջանկացան եւ երջանկացողքն ազգեր : Այլ այս որչափ բարի ըստ ինքեան, այն-

չափ եւ վնաս է օտարին . զի որչափ զօրեղ լինի հայրենա-
սիրութեան եռանդը , այնչափի կ'մղէ իւր ենթակայն առ-
օտարն . նա եւ մի գեղեցիկ ագահութիւն է հայրենասիրին
որ որչափ մատակարարէ հայրենեաց իւր ձեռքէն էկած
բարիքը , մերթ յանձնէ մերթ յօտարաց . այնչափ տակաւին
լուր բաղձանք կ'բորբոքի , այնչափի կ'անյադասայ , այնչափ
կը յանդգնի մինչեւ կամ աշխարհի ընդհանուր բարիքը
բռնել ձգել մէջ հայրենեաց , կամ զանձն արեամբ կորու-
սանել մի անմահ յիշատակաւ , մի գիւցազն մոլութեամբ
մեռանելով ի վերայ հայրենեաց :

Առաջնոյն օրինակ լինի Արամ . երկրորդին Արայն . միոյն
օրինակ Տրդատ , միւսին Վարդան : Սոցա օրինակներով
կը ճանչնամք հայրենասիրութեան բուն իսկութիւնը , որ
թէ մեռնի թէ մեռուցանէ անմահ է . եւ մեռ-
նողին եւ մեռուցանողին պայմանն է անձնանուիրութիւն .
անձնանուիրութիւն բուն հայրենասիրութեան միջոցն է ,
իսկ սոցա աղբիւր միութիւն եւ անխտրութիւնն է :

Ամենայն ազգի յառաջադիմութեան միջոցն այս է . միշտ
երջանիկ կ'լինի այն ազգ եւ ծայրագոյն բարեաց տէր ,
որոյ կրօնական եւ իշխանական դուռներ մի ուղղութեան
շաւղով կ'ընթանան . հասարակութիւն իբրեւ անիւս կառաց
նոցա ետեւէն դիտելով կերթայ . ընդ հակառակն վտանգ է
այն հասարակութեան որոյ այս երկու գլխաւորներ հակա-
ռակ միմեանց վարուելով խոտորին ուղիղ պողոտայէն ,
յայնժամ հասարակաց անիւներ այս կողմ՝ այն կողմ՝ բաշ-
ուելով քարերու զարնուելով կամ վիհերը ընկղմելով պիտի
վշրի բեկանի անշուշտ , այսչափի փնտա երկու անձէ կ'ծնա-
նի . եւ փոխանակ նոցա խեղճ ժողովուրդը կ'վտանգի . վասն
զի երկպառակելով մաս մի մէկին եւ մաս մի միւսին պիտի

հետեւին, և որ կողմ որ պարտուի, իրեն հետ եղած մասն էլ իրեն հետ կ զսհուի. այսպէս կ պակսի ժողովուրդ, այսպէս կ տկարանայ ազգ, և այսպէս կաւերի տուն և թաղաւորութիւն :

Այս գէպքը ոչ միայն Հայրապետի և Թագաւորի մէջ կամ Եպիսկոպոսի ու իշխանի մէջ. այլ և նախարարութեանց մէջ, գաւառներու կամ գեղերու մէջ, թաղի և ընկերութեան մէջ, եղբայր և ընտանեաց մէջ ևս թէ պատահի մի և նոյն հետեւնիքն ունի. և ինչպէս այս հակառակութիւն մեծամեծ չարեաց առիթ է. սորա ընդ գէմ միութիւն ևս անչափ բարեաց ծնունդ է : Թէ կ յիշես ի՛նչէ մեր սուրբ Եղիշէի ասածն. « Զուգութիւն է մայր բարեաց, անգուգութիւն ծնող չարեաց » :

Այս Հայրենեաց բարգաւաճութեան մէկ հատիկ հնարք է միութիւն, և աւերման անմիաբանութիւն. սոցա օրինակներ շատ կան մանաւանդ մեր ազգի պատմութեանց մէջ. որոց վերայ խօսիլ մի ըստ միովէ երկար կ լինի այստեղ. այլ այսչափ միայն յիշելով անցներք, թէ յիշեալ առիթներն են որ մեր ազգք չարչարեր ու նուազեր են, կամ կենդանի ու անուանի պահեր են :

Խօսքերնիս առանց երկարքընելոյ դառնանք մեր ներկայ հայենեաց վերայ աչքը ձգենք, և ապա հայրենասիրութեան պարօքն ի՛նչէ, գրենք :

Ներկայ հայրենիք մեզ համար մի բազմամասնեայ մարմին է. գլուխ առանց պարանոցի, թե առանց բազուկի, անձ առանց անդամոց, սիրտ կենդանի բայց վիրաւոր, աչք լուսաւոր բայց փակուած, իւրաքանչիւր մասունք միմեանցից հեռու անջատեալ, ցրուեալ, բայց ոչ կորուսեալ : Ոչ, ոչ, այս մարմին, կարծես թէ Նախախնամու-

Թիւն անմահ սահմաններ է. նա շատ անգամ այս վիճակին պատահեր , բայց ոչ երբէք կտրեր է . Թէ պարանոց կտրեցին , բազուկներ զօրացան . Թէ բազուկներ կտրեցին , ոտերով յառաջ գնաց . Թէ սիրտ վիրաւորեցին , հոգին կենդանի մնաց . և այժմ այսպիսի դրութեան մէջ կ'շարժի նա դեռ ևս ու կ'յառաջէ : Շատեր մեռած համարեցին , բայց կենդանի էր ծանաչեցին . ոմանք անդամալոյծ է ասացին , բայց ահա ոտքի էլած կ'յառաջէ . տեսնու գարմացան . բայց ինչ օգուտ աչքը չկայ , ասացին . վերաջպէս դա յառաջելով պիտի վիհերու մէջ ինկնի , տիղմերու մէջ թաւալի և յայնժամ դուցէ անկանգնելի լինի կորուստն :

Սորա մերձենանք , ձեռքէն բռնենք , առաջնորդենք , կամ սորա աչքեր բժշկենք ասողներ չեղան . և Թէ լինէին էլ , այն վիրաւոր բայց արթուն սիրտ պիտի չհաճէր , չներէր իւր անդամներուն օտարին առաջնորդութեան ետեւէն երթալ . ինչու որ ինքն շատ անգամ այս փորձն արած էր եւ փոխանակ օգտի ընդուններ էր վիշտ . վիշտ , որոյ ցաւովն է դեռ եւս կ'հեծէ ողորմաբար :

Բացայայտ է ասածս . այս մարմին մեք իսկ եմք , մեր ազգի պատկեր այս մամիչն է . ցրուեալ եմք մաս մաս զանազան տեղեր , որիչ որիչ ազգաց կամ տէրութեանց իններջոյ . մեր գլուխ մնացերէ Այրարատ . ուր իւր լուսաւոր աչքերը յերկինս ամբարձած , վերին այցելութեան կրօնասէր յուսով : Վաղարշապատու եւ Արտաշատին մէջ մեր պարանոցները կտրած , տարածելով բազուկներ Անի եւ Նիկիկա . կտրուեցան աջն մատնութեամբ , ձախը խաբուելով եւ տրակարանալով . մատները սփռեցան որ իլեհաստան , որ իՊարսկաստան եւ ի Հնդկաստան . Անձն մնաց երկու երեւելի և հզօր Տէրութեանց ձեռքը . ոտներ պարզելով մէկն տաք միւս

առ երկիրներու մէջ, մէկն տապալցաւ միւսը պաղեցաւ . իսկ այժմ երկուքն եւս զօրութիւն առած սկսեցին վեր կենալ, շարժիլ եւ յառաջ տանել այս անկեալ ահագին անձը : — Այո եւ սիրտ հոգւոյն հետ կպած ամէն անդամոց մէջ արեան շրջան կ առնէ :

Բայց երակներ չեն բաներ . երակներ սառն ու իրարմէ բաժան կ մնան : Ահա մեր բուն խնդիր . ահա մեր վերեւ խօսուածներուն նպատակ : Չը միացաւ դեռ մեր ազգը վասն զի հայրենասիրութիւնդեռ չի ուսեր, — եւ ո՞ր վարժապետն էր իրեն ուսուցող : Հայրենասիրութիւն չը գիտէր մեր ազգ, նորա համար բաժնուեցաւ, բաժնուեցաւ հետեւաբար եւ չարաչար տկարացաւ . արդ եթէ միանայ, պիտի կանգնի . բայց սյս բարի նպատակին հասնելու համար, պէտք է նախ ուսանիլ ճշմարիտ հայրենասիրութիւն . Այս մասին տղայոց ուսանելի միջոցն է դպրոց եւ վարժապետ . մեծերու համար եկեղեցին ու վարդապետ : Հայրենասիրութիւն նախ եւ յառաջ պէտք է Եպիսկոպոսն ու Վարդապետ, Քահանայն ու Վարժապետն ունենան . վասն զի ազգ եւ ազգի դաստիարակութիւն նոցա ձեռքն է . Աստուած՝ հանդերձ հայրենասիրութեամբ, բարոյականութիւն՝ հանդերձ ազգասիրութեամբ պէտք է ուսուցանել մեր ժողովրդեան . այսպէս կ ճանաչեն նոքա ճշմարիտ հայրենասիրութիւն, այսպէս կ դառնան անձնանուէր իրենց հայրենեաց :

Որովհետեւ ճշմարիտ հայրենասիրութիւն կ կայանայ հասարակաց օգտին վերայ, ուրեմն անխոր պէտք է հաղորդենք միմեանց բարիքը . հարուստն սնանկին օգնելով, առողջն հիւանդին, մեծ փոքրին, բաղդաւորն անբաղդին . եւ այն դարձեալ կասեմ անձնանուէրութեան պայմանաւ կ յաջողի,

զի թէ անձնանուէր չլինի, միշտ առ անձն կամ մասնաւորապէս առ բարեկամն կ'վերածէ իւր բարիքը. որով կը տկարանայ միութեան ուժը, յետ կ'մնայ հասարակաց յառաջադիմութիւն, կ'ընկրկի ազգային բարեկաւութեան ընթացքը, եւ ինքն միայն այդ յաջողութեանց հասած լինելով արտաքոյ է հայրենասիրութեան պայմանէն. արտաքոյ է իսկական բարեգործութենէն. եւ պարտաւորեալ բարոյապէս իւր հայրենեաց երախտագիտութեան դէմ, իւր խղճի օրինաց դէմ, իւր առաքինի Նախնեաց նուիրական արեանց դէմ, եկեղեցական եւ ազգաշէն սուրբ Հայրանց յիշատակաց դէմ. որոց արեան եւ քրտանց շնորհիւ մեք ծնունդ առած, կենդանի մնացած եւ այս աւուր բաղդին ու յառաջադիմութեան հասած ենք: Արդ մեք այսչափ ցրուած լինելով եւ երկար դարերու մէջ թշուառութիւն եւ դերութիւն քաշելով մեր բուն հայրենեաց տեղիքն անգամ մոռացած եմք: Ո՛ր անհնարին ցաւ:

Բայց ես աւելի կ'ցաւիմ մեր ազգայնոց այն մասին վերայ. որ լուսաւոր մտօք եւ յիմար կարծեօք սոյն վճիռ հաներ են, թէ ոչ հայրենիք մարդուս ծնած եւ բնական տեղին է. զոր օրինակ, հայրս զիս ծնաւ ի Պօլիս. կամ դու կը բնակիս ի Թիֆլիզ. ահա մեր հայրենիք, ուր բազմի տէր եղած եմք, ուր կալուածներ ու ժառանգութիւններ ստացած եմք. այնտեղի համար պէտք է աշխատենք. մեր զաւակներուն մեր քաղաքի յառաջադիմութեան կրթութեան համար ջանանք. մեք մեզ պարտական եմք, մեր զաւակներ երջանիկ լինին. փառք Աստուծոյ, ժամ ու պատարագ անպակաս. փառաւոր տեսարաններ, զուարճալի տեղեր, ուրախութեան միջոցներ շատ. վիճակնիս ապահովութեան մէջ. ահա մեր հայրենիք. — իմաստնոց խնդրած հանգիստ ոչ:

Այս ասելով անխիղճ սրտիւ քանիսն էլ միամիտներէն իրենց հետ ձգելով յառաջ կ'տանեն իրենց նպատակ :

Վան մի մաս ազգայինք էլ , որք թէ եւ Հայաստանին քաղաքացի . բայց յիշեալ գանդալտարին տէր . միեւնոյն աղբիւրէ ջուր խմած եւ միեւնոյն համոզման վերայ են . իբր թէ « Ես Վարին քաղաքացի լինելով պարտիմ միայն իմ հայրենեաց պայինքն Վարնոյ ազգայնոց յառաջադիմուել թեան օգնել . Խորբերդցին տկար եւ աղքատ ժողովուրդ . ես նորա օգնելու չեմ պարտ . ահա ես միայն իմ հայրենիք — Վարին լուսաւորելու համար իմ հայրենասիրութեան պարտքս վճարեցի » : Բայց այդ գաւառասիրութիւն է եւ ոչ հայրենասիրութիւն . մեր ազգ թէ իւր զօրութիւնը ցրուեց այսպէս եւ նուազեցաւ , այդ ասլթն էր . որ ես ինձ համար դու քեզ՝ մի ձար դռնենք ասելով , զերբորդ մասն որ տկար եւ կարօտ էր մեր ձեռին , երեսի վերայ ինկած դարեւոր թաւալմամբ . դեռ եւս կ'հեծէ : Եթէ այդ համարուէր հայրենասիրութիւն , ապա ուրեմն կարդարանայ Գաղիկ Արծրունին , որ թողլով հասարակաց օգուտն Բագրատունին Սմբատ Հազարացւոց ձեռքը ի կախաղան իմահ եւ ի խաչ մատնեալ , ինքն անհոգ լինելով այս մասին , իւր հայրենեաց Վասպուրականին հոգը միայն կրդդար :

Թերեւս մեղանչերէ եւ սուրբն Վարդան Մամիկոնեան , որ ինքն Տարօնոյ զաւակ եւ իշխան լինելով , թողուց իւր բուն հայրենիք եւ դիմեց առ բարին հասարակաց Արտաշու դու գաշտին մէջ . իւր նուիրական սուրբ արիւնք ախոյեան տալով ընդհանուր Հայրենեաց . հայրենասիրութեան բուն պայմանն այսէ . ապա թէ ոչ եւ սուրբն Մեսրոպ Հայեկացի թերեւս պարտական էր նա իւր Աստուածատուր շքնորհքը — Հայկական դպրութեան հրաշալի գիւտ՝ իւր գե-

ղին միայն տալ, այդ ոչ հայրենասիրութիւն կհամարուէր, կարծեմ եւ ոչ Աստուած այն շնորհքը կբաշխէր նորա :

Այլ ինչպէս ասացինք մեր կտրտած երակներ իրարու հետ յօդելու համար անխորութիւն պէտք է ունենայ հայրենասէրն. եւ ճանաչելով որ բուն հայրենիք կկայանայ այն տեղին վերայ, ուր մեր Դիւցազանց եւ Սրբազան հարգ յիշատակներն են. ահա այն տեղն է մեր սիրտ ո' հայրենասէրք, մեր ազգութեան վերաւոր սիրտը այն տեղ նեղութեան եւ ցաւոց իներքոյ կհեծէ կմորմոքի : Այս սրտին դարման տալու է : Այս կեդրոնի մէջ կան մեր հայրենիաց հարազատ արեան ծնունդներ. բայց դժբաղդ եւ կարօտ են. տքա նեղ եւ անտանելի վիճակին մէջ անգամ հայրենասիրութենէն ստիպեալ ամենայն վիշտ մինչեւ մահ եւ արիւն յանձն առած՝ միացեր են պահապան մեր հայրենի յիշատակաց. այնինչ մեք շատերս չկարողանալով դիմանալ՝ ցրտեցանք գնացինք մեր անձին հեշտութիւն գտանել օտար աշխարհները : Այո ճշմարիտ խօսելով, Հայաստանի բնակիչք մեծ բարերարութեան իրաւունք ունին գաղթականներէն. նոքա որ պահպաներ են մեր ազգի միութեան քայքայուած հիմունքը : Հայրենի երկիրներու համար է խօսքս. վասն զի թէ նոքա եւս իսպառ գաղթելն, այժմ Հայաստան իւր անունն անգամ կորուսերէր ազգաց մէջ. եւ մեր պատմութիւններ կարդացած ժամանակ, մի անհաւատալի կամ սոսկ երեւակայելի պատկեր պիտի համարէինք :

Ուրեմն ճշմարիտ հայրենասիրութիւն կպարտաւորէ ձեզ ո' ազգայինք, բաղդի եւ խեղբի տէր անձինք. որ օգնէք անխորաբար կարօտեալ մասին. այս միջոցով միայն կարենք մեր հայրենիքը կամ մեր ազգ ընդհանրապէս լուսաւորել :

Գ. Սրբանձտեանց Ա. Ժ. Վ. Վ. :

ՀԱՅ ԱՍՒՐԻ ՈՂՔ

Քանի՜ տարի է Հայրենիք սիրուն,
Դառըն ցաւերովդ եղեւ Եմ' ջուշտուն,
Սար ու ձոր ընկած իբր խենթ մաջնուն,
Վեր առ ըզքնարդ մոռսայդ դիւցաղուն :

Ողբամք Հայաստան, ափսոս Հայաստան :

Մըթնեցաւ Հայոց սլայծառ լուսաստուն,
Խեթիւ հայեցաւ Ակըն գերաբուն :

Միշտ սլդպէս ձմեռ, ե՛րբ հասցա գարուն :

Արի նըստեմք լաճք, ո՛վ Հայ իմաստուն : Ողբամք Հայաս :

Վախում եմ' մի, որ անտէր անպաշտպան

Մեռնի այս հիւանդը, ոչ դեղ ոչ դարման,

Ու սյնպէս կորչի ազգըն աննըման,

Մեղ քնում է սուգ, ո՛վ Հայ գիւնական : Ողբամք Հայաս :

Եկէք ի հանդէս, ազաւոր տեսարան :

Ո՛վ մեծըդ Ներսէս, Սահակ Պարթեւեան,

Մեսրոպեւ Մովսէս արփիք թորդովեան :

Եկէք երջանիկ Հաւքըդ սրբազան : Ողբամք Հայաս :

Չը կան ազգասեր նախնի իշխաններ,

Ցըրուած է հօտը, չ կան ժողովուրդներ,

Հաւատն է միայն, ոչ միութիւն ոչ սեր,

Լէր դու ողբակից, ո՛վ Խորենեան ծեր : Ողբամք Հայաս :

Հայաստանի մէջ զանազան աղգեր,

Իւր խեղճ որդիքը պանդուխտ ու անտէր :

Քաղաքք ու աւանք անբընակ աւեր,

Աւերակ ու անշէն են Հայոց տներ : Ողբամք Հայաս :

Ինչո՞ւ դու ալդպէս ո՛վ վերին Տնտես,

Հայոց խեղճ ազգը արեցիր անտես :

Ե՛րբ արդեօք մեզ դու լոյս պիտի ծագես,

Ե՛րբ բարի իշխան մեզ պիտի կարգես : Վանդնեա Հայաս :

Մի՛ թողուր, մի՛ թողուր աւեր Հայաստան :

Յարո՛ դու կըրկին զազգըն անկենդան :

Լուր մեզ դու լուր մեզ փրկի՛չ բարեխնամ,

Փայլէ՛ցո՛ կըրկին փառքն Արարատեան :

Վանդնեա՛ զՀայաստան, ափսոս Հայաստան :

Ի տաղաշափութեանց

ՅԱԿՈՎԷԱՅ Մ. ՄԻԼԻՔ ՅԱԿՈՎԷԱՆՑ :

ԱՆՁՈՒԿՔ ՄՐՏԻ ԱՌՈՍԱԿԵՐՄ ՍԵՆԵՔԵՐԻՄԱՅ
ԱՐՔԱՅԻՆ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ

Որ ննջցէ մթն ոչ յաւելուցրունա յառնել ,
Մինչեքբ այդպէս փխր ննջես եւ ոչ երբեք զարթուցուս .
Յայդ շիրիմ հազարամեայ հերիք եղեւ քեզ կաւ ի ուն :
Եւ այդպէս անխառնեանի դիմ ի հոգ տապաւնիդ .
Յամբեալ սակերք վեհ Սրժբունույս շարժեցաբուք արդ առ միմեանս ,
Միութեան հոգին ըզձեզ թող կըցեսցէ դարձեալ ողջամբ .
Հրաշանորոգ յարութեամբ յոսկն կացեալ կենդ անառջիք .
Համայն որդիքս Հայկեան թող բերկրեսցին յոյն ժամխտր :
Գնաց անդարձ դարն այն անդուծ , կորեաւ խաղաւ աղբ Նետուաց
Որ ըբեզ ի Հայրենույդ զըրկեաց վարեաց օտար յաշխարհ :
Եղեկիել քեզ ի վերուստ պատգամ ձայնէ ուրախակց .
Յամբեալ սակերտիքդ ոչ ուռձապցին դարձեալ ի փառս .
Անդամն շարժեալ ի շունչ ողջ շրջեսցին ի Հայաստան
Հայրենեաց բարդաւանդն բուռցին դարձեալ դաշնաւորդ :
Գլտեմ , ցաւէ քեզ անհանգստութեւ ի շիրմիդ հեծեն սակերքդ ,
Մինչ Արժրուհույդ թադ դաւաղան ընդ քեզ թաղին հս զոր առ
Թեւ եւ ննջես այդպէս երկար , մի վհատիր դու յուսահատ .
Գայ ժամանակ զի քո Սրժիւ զարդ արեւոյի նորափետուր .
Որդիքդ Վասպուրական տեսցին զարեւ բաղէին ծագեալ :
Քեզ եւ յերկնից նոր աւետիս հընչ Աստուած Եսայիայ ,
Ընդ քեզ ընդ Հայաստան ասե հաշտեալ եմ տառապեալդ ,
Արդ կամիմ ըզքո որդին կրկին իքեզ տալ վերադարձ ,
Ջրոյ Թնամուոյն ժանտ ձեռաց օտար հար եւ ցրուեաց ի քնն բոց :
Ծաղկաբեր քո դաշտորոյք արեամբ որդեղորդ սղոյեալ ,
Բուսուսցին ըզդաւորիս , զարման Հայոց դու աւետիս :
Ըզ բաղդ Հայոց տեսեալ ի հոգոյ ածիւնացեալ , ասեմք ոչ ,
Մինչեքբ , ով Տէր , նորոգեսցես անդէն ի մեզ ըզմեր յոյս :
Ահա սակերք , ահա շիրմ եւ մեր նախնին Սենեքերիմ ,
Այլ ուր մեր բաղդ , Թաղին անդու ոչ դարբեցաւ ի դուք շիրմին :
Ննջ դու ով վեհ , ըրիկ տաճարիս զոր կամք վեհիդ կառուցին ,
Հոգեպիդ առ Տէր աղերս մատո տալ Հայրենույդ զատմինն .
Սերք Արժրուհույդ եւ ձեռք Արժուոյս զուլայնդ լայր դանի համբուրեմք
Եւ մեր ձեռօք դնեմք այժմ ի դիր մինչեւ հանցէ երկնից ձեռք :

Եղիշէ Մ. Մեարդպետան Արժրուհի
Ա. Ժ. Վ. Վարդապայ :

ԱՆՁՆԱՆՈՒՆԻՔ
ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԳԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ՝

ՎԱՆ.Պ.Մկրտիչ Տ.Ատոմեան :

ԲԱՂԵՇ.Պ.Տիգրան Կալփաղչեան Պօլսեցի :

ՄՈՒՇ.Աշա Վարդան Մամիկոնեան :

ԿԱՐԻՆ.Խաչատուր Խան Տ.Ներսիսեանց :

ՏՐԱՊԷՉՈՆ.Պ.Ստեփան Մ.Յակովբեանց :

ՊՕԼԻՍ.Ղեւոնդ Վարդապետ միաբան Վարադայ :

ՏՓԽԻ Ս.Պ.Համբարձում Էնֆիսաձեանց հրատարակիչ ՊԷ-
ռունկ Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն.եւ Պ.
Գարեգին Մուրատեանց :

ԳԱՆՁԱԿ.Պ.Ներսէս Աբրահամեան :

ՂԱՐԱԲԱՂ.Ընթերցասիրաց Թանգարան :

ԱՂԵ-ԲՍԱՆԴՐՊՕԼ.Սիմէոն Սարկաւազ Օրէնսոլսոյց
ՂԱՔՈՆԻ ուսումնարանին :

ՆՈՐ ՊԱՅԱԶԻՏ.Աշա Բարսեղ Արծրունեաց :

ԵՐԵՒԱՆ.Պ.Զաքար Տ.Յոհաննէսեան :

ՆԱԽԶՈՒԱՆ.Մ.Մկրտիչ Թունեան :

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ.Պ.Գապար Ասլանեանց :

ՆԵՐ-ՔԻՆ. — ՈւսումնասէրՏ.Յակոբ քահանայ Տ.
Անդրէասեանց :

ԴԱԻՐԷԺ.Մատթէոս Նազարեանց եւ Յոհաննէս Շիսեանց

Ղարաբաղցի վաճառական ուսումնասէր Պարոնայք :

ՍԱԼԱՄԱՍՏ.Աշա Պատալ Արզումանեան :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻԹՈՑ :

Ժողովրդական դպրոց :	65
Տվեսիս քաղաք :	79
Հայրենասիրութիւն եւ Հայրենիք :	87
Հայասիրի ողբ :	92
Անձուիք սրտի առ ոսկերա Սենեքերիմայ արքային Արծրունւոյ :	96

ԳԻՆՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՊԵՐԱԴՈՒԹԵԱՆ ՎԱՆԽԻԿ

Ի վան, 'ի Բաշէշ, 'ի Մաշի, 'ի Վարիշ, երկուսն իւրեանց Օսմանի խան շուրճիկոյ արձան Մեծիպիէ :

Իսկ Պալիս եւ Տաճիկապահի սրբի խաչաները երէս արձան խան շուրճիկոյ Մեծիպիէ :

Իսկ ստապահ եւ 'ի Պաշախապահ չորս արձան Մանէր :

Ճանապարհին ծախս խաչքարէն պիտի լինուի :